32. ԳՅՈՒԼԻՋԱՐ

Կ'էղնի մե թագավորըմ, էվլեդ դեվլեդ աղի չունենար (տղա զավակ հատ մ'իսկ չունենար)[1] կ'ելնի ու կէրթա, կ'ըսե.— էրթամ աշխարք ժուռ գամ։

Կէրթա. ճամխին հրեշտակըմ ըռաստ գուքա։

Հրեշտակ մարթուն կ'ըսե թե.— Մարթ դու ո՞ւր կէրթաս։

Կ'ըսե.— Ես ավլադ չունիմ, սիրտս ելեր է, կէրթամ։

Կ'ըսե.— Մի էրթա, արի ետ դարձի, քովըս մե խընձորըմ կա, կուտամ քեզի տար, էս խնձորը կըճպե, կճեպները լից ձիուդ հ'առեշը, քու ձիդ էլ քուռակ չէ բերե, քու կընիկդ էլ երեխա չէ բերե։ Խընձորն էլ կիսե։ Կեսը դու կե, կեսն էլ քու կընիկըդ, կըճեպները ձիդ ուտե. քեզի մե լավ զավակըմ կէղնի, ձիդ էլ մե լավ քուռակըմ կը բերե։

Կառնի էդ խնձորն ու կը դառնա կը, գուքա կը բերե, կը կըճպե, կճեպները կուտա ձիուն, խնձորի կեսը կուտա կընկան, կեսն էլ ինքը կուտե։

Կ'էղնի օր, ինը ամիս կը թմմի։ Կնիկը կը պառկի մանչըմ կը բերե։ Ձին էլ քուռկի մե ղյամար թայիմ կը բերե։

Մանչու վախտը կը թմմի։ Մանչը կը խոշորնա։ Մանչուն մե շիշով այվանըմ կը շինե գը։ Մանչը կը դնե էդ այվընի մեջը։

Մանչը կը կարդա գը։ Հաց ուտած տեղը օսկորով կը ղարկե, շուշեն կը կոտրի գը։ Արեգակը գուքա կը դպնի գը իդոր այվանը։

[1] Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

Կելնե արեգակի հետ կը խոսի գը։ Արեգակ իգոր հետ չի խոսի։ Արեգակի հետ գյուլաշ կը կըպի։

Մերն էլ գուքա, կըսե.

— Ա՜յ տըղա, ի՞նչ կէնես։

Կ'ըսե.— Մայրիկ, էս ի՞նչ է, էկեր է իմ այվանըս։ Կը խոսիմ գը չի խոսի, գյուլաշ կը կպիմ գը, չի կպի։

Կ'ըսե.— Հա՜յ տղա, էդիկ արեգակ ա։

Կ'ըսե.— Արեգակն ի՞նչ է։

Կ'ըսե.— Օղուլ, արեգակ կա, աշխարք կա։

Կ'ըսե.— Աշխարքն ի՞նչ է։

Կ'ըսե.— Աշխարքն խսան է՞, մարթ կա՞, շենլիք կա՞։

Կ'ըսե.— Մայրիկ, ես դուրս ելնիմ աշխարք տեսնիմ։

Կ'ըսե.— Ե՞լի։

Մանչը դելնի դուրս, գելնի կաշե օր, շենլիք կը դատին գը, կերթան, դուքան, ախչիկ կա՞, հարս կա՞, կնիկ կա՞։

Գուքա կ'ըսե.— Հայրիկ, ես պիտի էրթամ պտըտվիմ։

Կ'ըսե.— Մի էրթա, օղուլ, դու ճամբա չիտես, դու ի՞նչ պիտի պտըտվիս։

Կ'ըսե.— Խնթրեմ կը օր ընձի իղին տուր, մեմե իմ ձիս տուր, հեզնիմ, էրթամ պտըտվիմ։ Պտըտվիմ էլի ետ դառնամ գուքամ։

Բերեն հերն ու մերը ձիու ուլարը[1] կը ղարգեն գը։

Տղեն կը հեծնի, կը հեծնի ու կէրթա։

Կ'էրթա կելնի մե սարըմ, կաշե սարի տակը մե շադրըրմ կա, շադրրի մեջը մե ըռունդ ախչիկըմ կա։

Կ'ըսե.— Ախչի անունդ ի՞նչ է։

Կ'ըսե.— Գյուլիղար։

Կ'ըսե.— Գյուլիղա՛ր, հեր ունի՞ս։

Կ'ըսե.— Ունիմ։

Կ'ըսե.— Մերը ունի՞ս, ախպեր ունի՞ս։

Կ'ըսե.— Ունիմ։

Կ'ըսե.— Գյուլիղա՛ր, մե շարաբըմ լից տուր ես խմեմ։

Լցե ու կուտա։ Կառնե կը խմե։

Գյուլիզարը կ'ըսե.— Դուն է քու ձեռքովդ մե շարաբըմ տուլ ես խմեմ։

Էն էլ լցե, Գյուլիզարին կուտա։ Գյուլիզար կառնի ու կը խմե գը։

Գյուլիզար կը մտնի շադրը։ Մանչը բեհուշ կ'էղնի, գըյնի շադրրի կուշտը, քիշըմ կը մնա։

---

[1] Թամք (Ս. Բ.)։

Գյուլիզարը ետ դառնա դուա գուքա։ Գուքա օր մանչը հոն ընգուկ է։ Նստի, մանչուն ձեն կուտա, կ'ըսե.

— Ինչի՞ ես հոտ ընգե, իմ հերս, իմ ախպերս, դուքան քեզի տեսնեն ի՞նչ կ'ըսեն,— կ'ըսե,— ելի գնա քու տունդ, ամոթ է էդմա բանը քեզի համար։ Կսկիծ չէ՞ քեզի, դուն է տուն ունես, դուն է հեր ունես։

Մանչը գելնի, ձին կը հեզնի, գուքա հորը տունը։ Գուքա ու կը պառկի գը։ Հերն ու մերը դուքան կը խոսին, չի խոսի հետները։ Հերը գուլա, մերը գուլա, դրկիցները դուքան թուի կէղնին կըսեն.— Ինչի՞ գուլաք,— հորն ու մորը կըսեն։

Հերն ու մերը կըսեն թե.— Մենք ավլադ չունեինք, էս մե հատ ավլադը աստված մեզի տվեց, մենք է ուրախացանք ու խնդացանք։ Ելավ գնաց դուա, ետ դարձավ եկավ։ Հիմի կը խոսինք գը, չի խոսի, լեզու բերան չունի։

Մարթիկն կըսեն թե.— Միք դիպի, թող մնա, էնոր վախտն օր քա, այրլամիշ կէղնի, կելնի ձեղի կըսե հ'իրա գլխու անցածը, ցավը, ինչորիսե, դուք դիմանաք։

Տղի վախտը կը թմմի, գելնի կը նստի։

Կէղնի մե աշըղրմ, հորն կ'ըսե.— Գնա, ընձի մե սազրմ բե։

Հերը կ'ըսե.—Օղուլ, ես քեզի կարթըլու տվի, ղու աշըղուութեն ի՞նչ պիտի էնես։

Կ'ըսե.— Ես աշըղ պիտի էղնիմ, իմ դարտս քեզի խաղով պիտի թարիֆ էնեմ, օր դու իմանաս։

Հերը կէրթա, սազրմ կը բերե էդա տղին։

Տղեն կ'առնի կը զարկե, խաղը կը կանչե, խաղով հորը կը հասկըցու, թե. «Ես շարաբ եմ խըմե, իմ շարաբս ախչկան տվեր եմ, կէրթաս, էն ախչիկը ընձի գուզես»։

Հերը կ'ըսե.— Լավ կէղնի։

Հերը գելնի ու կէրթա։ Կէրթա էդ չադրրի դուռը կիշնի։

Կէրթա ախչկա հորը կ'ըսե.— Աստծու ամրով էկեր եմ, քու ախչիկդ իմ մանչուս գուզեմ։

Կ'ըսե.— Շատ լավ կէղնի, դու օր գուզես, ես էլ կուտամ, ագար աստված նասիբ էրեր է իմ ախչիկս քու մանչուդ։ Դու մե թագավորըմ, ես մե ախքատ մարթըմ, ինչի՞ պիտի չի տամ։

Հերը կը նշանե գը ախչկան, հարս կէնե, մատնին կանցու, էրկու օր կը կենա գը։

Գելնի կըսե.— Կեցեք բարով, հարսիս լավ մուղաթ կացեք, էրթամ քառսուն օրը թմմի, թաբտիր էրեք գուքամ իմ հարսըս կը տանիմ։

Հերը էդտից գելնի գուքա։ Գուքա իրեն տուն։

Դրկիցները գուքան, գուքան հորը կըսեն.

— Աչքդ լուա, դու մե զավակըմ ունեիր, գնացիր նշանիր, շատ ուրախութենով հարս էղնի, շատ խերով հարս էղնի։

Էդաեղ ըրախի կը խմեն ու քեֆ կէնեն։ Դրկիցները շատըմ կը խնդան գը։

Կէղնի օր մանչը գելնի էրթիքը, ինքը շահել տղա է, իրեն համար կը խաղա գը։

Մե կնիկըմ ջրի կէրթա, փառչը առե շալակը։ Էդ մանչ քարըմ կը ցքե, կէրթա կը դպի գը իդոր փառչին։ Փառչը կը կոտրի՞։

Կընիկը էդաեղ կը դառնա կ'ըսե.— Վա՜յ տղա՛, դու գիտես օր էգիկ քեղի պիտի մնա՞։ Դու յավաշ օր ես քու գըլխուղ ինչ խաղամ, դու ընձի վա՜յ տուր, դու էրիր ես մնացի, ես էդիկ քու վըրեդ չեմ թողնի։

Մանչը կըսե.— Քու էղածըդ ի՞նչ է, դու մէ սղլուշաղըմ[1] դու ընձի ի՞նչ պիտի էնես։ Հերսոտի, հերսոտի գնա՛ տունդ։

Կընիկը կըսե.— Էրի, էրի, չէրի իսա, դուն էլ գնա պարզենցի ու պատվի։

Կնիկը գուքա։ Կէրթա, մե Ջազի Նինեմ[2] կա, կէրթա էդ Ջազի Նինի քովը, կըսե.

— Նինե, ես քու ոտքըդ կը պաքիմ, քու տղիդ բախտն եմ ինգե, դու դիտես, հ'ելա գնացի շրի, ֆիլան մանչը զարկեց իմ փառչս կոտռեց, կարա՞ս դու էն մանչուն գլխուն մե գեշ բանըմ բերես, էման մե բանըմ բերես օր, իրեն մուխը մոլըրի։

Նինեն կըսե.— Էդ մանչը նիշանուկ է՞։

Կընիկը կըսե.— Նիշանուկ է։

Կըսե.— Է՜, դու սուս կեցի, ես դիտեմ էնոր գլխուն ինչ կը բերեմ, էման մե բանըմ Չնոր էնեմ օր, հեչ չէղածի։

Ջազի Նինեն գելնի կը հեծնի խընոցին, օձը կէնե ղամչի կէրթա, կէրթա մանչուն նշանլու չադրի քովը, խնոցոցեն կիշնի, օձը կը դնե խնոցի մեջը, ղաստեմ ծաղիկ կը քաղե գը, կը բերե կը զարկե խընոցու բերանը։ Կըզկըտի, կը մտնի գը չադրեն նե, ախչկա հերը գուքա, կըսե.

— Պառա՛վ, դու ո՞ւրդից ես։

Կ'ըսե.— Ես, քու ախչիկդ օր տվեր ես, էն գեղացի եմ,— պառավ կըսե ախչկա հորը,— հեչ կը հարցուս գը ի՞նչի ես էկե։

Կ'ըսե.— Կը հարցում, թե ինչի՞ ես էկե։

---

[1] Կինարմատ (Ս. Բ.)։

[2] Կախարդ կին (Ս. Բ.)։

Պառավը կըսե թե.— Էկեր եմ օր, էս քու ախչիկդ կսկիծ չէ՞, էսման ըռունդ ավլադ ունիս, էն խելառ մանչուն ինչի՞ ես տվե։ Էն մանչը շատ խելառ է, հար իրկուն հանդերը, սոխըխները ժուռ գուքա, բռնեն բերեն կապերով կը կապեն գը, ընգնավոր է, խույ ունի, շին ունի, կատղուկ է, օր կը փրփրի իրեն միս կը կրծե գը, կսկիծ չէ՞, էսման ախչիկը դու էն խելառին ինչի՞ տվեր ես։ Առ ախչիկդ փախի, երկըրներեն դուս ելի, էն խելառին մի տա քու ախչիկդ։ Ես քու քուրդ եմ, ախչկա համար էկեր եմ, օր էն խելըռին չթողնեմ տաս ախչիկդ։

Հերը կըսե.— Կառնիմ ախչիկս կը փախիմ գը, էլ ոչինչ բան էլ չեմ տա, ես ղարիբ էի, չիտեի, լավ էրիր օր էկար ընձի ըսիր։

Ջազին էդտից կը դառնա գուքա։ Գուքա իրեն տունը։ Կնիկ գուքա Ջազու քովը։

Կըսե.— Նինե, հաչաբ ի՞նչըխ էրիր։

Նինեն կըսե.— Էման մե բանըմ էրի օր հեչ չէղած։

Էդտից ախչկա հերը գելնի, սարախտան ախչկան ու կնկան կըսե.

— Մեր շեհերը շնդեք։

Կնիկը կըսե.— Մարթ, ի՞նչ էղավ։

Մարթ կըսե.— Ես պիտի քոչիմ։

Ախչիկը գուլա, նշանուկ է, մե գիրըմ կը գրե, կը դնե գը օճըխի պատի ու քարի արալըղը։

Գրի մեջ կը գրե թե. «Իմ նշանլուս գա էս գիրը գտնե. Ջազի Նինեն էկավ իմ հորըս չարութեն էրավ, իմ հերս ելավ քոչեց, երբոր ընձի գտավ իմ նշանլուս ետև աշխարք մտնե, քանի օր ընձի չէ գտն, աշխարք չը մտնե»։

Գելնին կը քոչին, կէրթան մե հեռո՞ւ երկիրըմ։

Էդ մանչու հերն էլ հեչ խաբար չունի, մանչն էլ խաբար չունի։

Քառասուն օրը կը թմմի, հերը կըսե.— Էրթամ հարսըս տեսնամ։

Հերը գելնի գուքա օր չադրներու տեղը կանանչը էլեր է ծունկ, նա հարս կա՞, նա շենլիք կա՞, նա իսան կա։

Հերը ետ կը դառնա գուքա։ Գուքա տուն։ Գուքա չայրեն թուռը։

Մանչը կ'ըսե թե.— Հայրիկ, ինչի՞ ես էդման գեշ էղե։

Կ'ըսե.— Ի՞նչ էնեմ, օղուլ, գնացի օր հարսըս տեսնեմ, գնացի օր նա՛ հարս կա, նա՛ հերը կա, նա՛ ախպեր կա՞, փախեր են, կորեր են։

Մանչը կ'ըսե.— Ի՞նչըխ պիտի էղնի։

Հերը կ'ըսե.— Կէրթամ մե լավ ախչիկըմ գտնեմ ու քեզի ուղեմ, կորել են, թող էրթան կորին, աշխարքը լիքը ախչիկ է։

Կ'ըսե.— Հայրիկ, ուչինչ բան է, իմ նշանլուս չըգտած, ուրուշ ախչիկ չեմ առնե։ Դու չես կանա գտնե, ես կէրթամ կը գըտնիմ, քանի օր աշխարքը շեն է, ժուռ գուքամ իմ նշանլուս կը գտնիմ գը։

Հերը կ'ըսե.— Մի ըներ օղուլ, դուն է կէրթաս կը կորիս գը, մե ախչկան համար մե մարթըմ կէրթա կը կորի՞ գը, աշխարք լիքը ախչիկ է, էնիկ չէղավ, թող մեկելը լինի։

Տղեն անկաշ չի էնե հորն ու մորը, կը քաշե գը իրեն ձին. օր կը հեծնի, հերն ու մերը միննաթ կէնեն։

Կ'ըսե.— Միննաթ մեք էնե, մայրիկ քու ամակդ ընձի հալալ էրա, ես կ'էրթամ, յա գամ, յա չգամ։

Գելնի ու գուքա։ Գուքա էգ չագըրի քովը։ Չաղըր մարթ չկա։ Մտնի մեշը կը պտրավի, կաշե օր քիչըմ թուխտ գրուկ, պատի ու քարի արալըղ ղրուկ է։ Թուղթը կը հանե, կը կարթա գը։ Կաշե օր, իրեն նշանլուն գրեր է թե. «Իմ նշանլուս ընձի չգտած, աշխարք չմտնի»։ Թուղթը կառնի ու կէրթա էդտից։

Կէրթա մե ուրիշ սարիմ տակը։ Կաշե, մե չագըրըմ կա։ Չագըրեն նե կը մտնե։ Կաշե նե շենլիք չկա։ Կաշե, մե սուֆրեմը դըրուկ է, սուֆրի վրեն օխտ ման գրուկ է, բերընները ծածկուկ է։ Բերանը կը բանա, կը նստի, կուտե։

Կաշե օր մե դեվըմ էկավ։ Գուքա էդ մանչուն կըսե.— Ե՛լ։

Կ'ըսե.— Կեցի, անոթի եմ, փորս կշտացնեմ հ'ետև հ'ելնիմ։

Դև կըսե.— Դու իմ եմգրներս[1] ինչի՞ պիտի ուտես։

Կ'ըսե.— Կուտեմ, անոթի եմ։

Կ'ըսե.— Ել մի գյուլաշըմ կպինք։

Մանչը կ'ըսե.— Կեցի մե փորս կշտացում հ'ետև հ'ելնեմ քեզ հետ գյուլաշ կպիմ։

Մանչը հացը կուտե ու կը կշտանա, գելնի դևու հետ դուռը գյուլաշ կը կպի։ Դևուն վեր կը կոխե։

Կ'ըսե.— Քեզի մորթե՞մ։

Դևը կ'ըսե.— Օյին իրեք հեղ է, իրեք հեղ գյուլաշ կպենք հ'ետև ընձի մորթե։

Իրեք հեղ էլ մանչը դևուն ալթ կ'էնե կը, քաշե գը դանակը օր դևուն մորթե։

Դևը կ'ըսե թե.— Այ տղա, կեցի քեզի մե միննաթըմ էնեմ, հ'ետև դու ընձի մորթե։

Մանչը կը կայնի։

---

[1] Կերակուրներ (Ս. Բ.)։

Դևը իրեն գյոքսի[1] կոճկները կը քակե գը, գևու լըղաբ վըրեչեն կը հանե, կէղնի մե լավ ըռունգ ախչիկըմ։

Կ'ըսե.— Ես աշխըրքի էրեսը, աստծու հառեչը վագա էի էրե, օր վեր էրիկ մարթը ընձի ալթ էրավ, ես էնիկ կառնեմ։ Հիմա դու ընձի ալթ էրիր, դու ընձի կառնի՞ս։

Մանչը կըսե թե.— Կառնի՛մ։

Իրեք օր դևու չադրը կը կենա գը, գիշեր օր կը քնին, մանչ իրեն թուրը կը դնե էրկուսի արալըղը։

Իրեք օր կը թմմի, ախչիկը կըսե մանչուն.

— Ինչի՞ էդման կէնես դուն։ Երբոր ընձի չէիր հավնի, թող չառնեիր, օր առար հիմի էնման ի՞նչ բան է։

Մանչը կ'ըսե.— Ես վադա ունիմ, ես նշանուկ եմ, իմ նշանլուա կորեր է, երբոր նշանլուս գտա նոր պիտի աշխարք մտնեմ։

Կ'ըսե.— Դուն նշանլուդ չես կրնա գտնի։ Կէղնի օր ես էլ գամ հետդ, բալքի ես գտնեմ։

Մանչ կ'ըսե.—Ո՞ւր է օր էդման մե ղոշախութեն մ'էնես, իրար հետ էրթանք, իմ նշանլուս գտնինք։

Գ'ելնին իրար հետ կէրթան, կէրթան մե քաղաքըմ։ Կէրթան մե ղոնաղի[2] քով, կաշեն, որ էդ ղոնղին դուռ ու էրթիք չկա, մեհրուկ[3] է ղոնաղը։

Մանչը կ'ըսե թե.— Իմ նշանլուս ղոնղի մեջն է, ընձնեն փախուցեր է հերը, բերե դուռը էրթիքը մեհրեր է, օր ես չգտնեմ։ Ես պիտի էս ղոնղու պատը փլում։

Ախչիկը կ'ըսե թե.— Մի դիպի, ղարիպ տեղ էսման բաներ մենք կանա՞նք էնե։ Կէղնի օր դուքան մեղի կը շարշրկեն։

Մանչը կ'ըսե թե.— Գիտենամ թե ընձի պիտի սպանեն, ես էս ղոնաղը պիտի փլում։

Ախչիկը կ'ըսե.— Դու գիտես, ես էլ չեմ խառնվի։ Քու մեխքդ քու ճիտդ։

Մանչը էդ պատի մե թարաֆը կը փլու գը, կը մտնի գը նե, կաշե օր մե ըռունդ ախչիկըմ նստեր է քարգահ կը գործե, հետն էլ գուլա։

Կ'ըսե.— Ախչի, ինչի՞ գուլաս։— Կաշե օր իրեն նշանլուն չէ։

Կ'ըսե.— Դարդս շատ է գուլամ։

Կ'ըսե.— Դարդդ ի՞նչ է, ընձի ասա։

---

1 Կրծքի (Ս. Բ.):

2 Տուն (Ս. Բ.):

3 Կնքած (Ս. Բ.):

Կ'ըսե.— Քու ի՞նչ պետքդ է իմ դարդս, դու ինչի՞ կը հարցուս իմ դարդս։

Կ'ըսե.— Աշենք ի՞նչ է, դարդդ իմանանք։

Ախչիկը կ'ըսե.— Օխտը ախպեր ունիմ, օխտ ախպերս է դյուշմընի վրա էն սարերու հետևը կռիվ կէնեն։

Մանչը կ'ըսե.— Ինչի՞ կը կռվին։

Կ'ըսե.— Իմ վըրես կռիվ կէնեն։ Ինոնք ընձի կը քաշեն գը, օր տանին, ախպրտանքս է չեն տա։

Կ'ըսե.— Ախչի, դու թալաշ մի էնե ես ընկերըմ ունիմ, ինքը դև է (այան չէնե, թե ախչիկ էր)[1] կէրթանք քու ախպրրտանքը կը խըլըսցունք։ Վե՞ր սարի հետևն կռիվ կէնեն, դու ելի մեզի խրատ տու մենք կ'էրթանք։

Ախչիկը գելնի սարը կը ցցու։ Էդոնք կը սորվին, կէրթան, կը սորվին ու կէրթան։ Կէրթան հեռու կը կայնին, կը կայնին էդոնց սեյր կէնեն։

Կաշեն օր օխտ ախպոր էրկուսը զարկվեր է, մնացեր է հինգը։ Կէրթան էն հընդի քովը կիշնին։ Էդ հինգ ախպերը դուքան կուրախնան։

Կ'ըսեն.— Աստված ձեզի մեզի ո՞ւրտից հասուց, երբոր դուք չդայիք, էրկու ախպերս զարկվեր էր, մենք հինգս էլ պիտի զարկվեինք։

Գելնին կռիվ կէնեն։ Կռիվ կէնեն, էնդու մարթիքը կը զարկվին դը, օր կը զարկվին էդ հինգ ախպերը կը պրծին կը, խլլըսին գը։

Կառնեն էդ էրկու մարթուն էլ կ'ըսեն.— Ձեզի պիտի տանինք մեր տունը, ձեզի լավ լավ պատվենք ու ձեր մարթութան տըկեն ելնինք, հ'ետև ձեզի ճամբու դնենք։

Կառնին ու դուքան։ Կառնին դուքան օր իրենց քուրոջ զոնդի կուշտ փլուկ է։

Հինգ ախպորեն մե ախպերը կըսե թե.— Ախպեր արի, դու հ'առեջ գնա, էս մեր քուրոջ զոնդի կուշտը ինչի՞ պիտի փըլի։ Մենք իդոր համար կռիվ կէնենք, էրկու ախպերս մեռան էդ քուրոջը համար։

Ախպոր մեկը հառեջ գուքա, գուքա օր քուրը գուլա, քարգահ կը գործե գը։

Կ'ըսե.— Քուրըս, էս քու զոնաղդ ինչի՞ է փլեր, մենք քեզի համար էրկու ախպերս մեռան օր դու էդման բան չէնեիր, դու ինչի՞ էդման էրիր։

Քուրը կըսե.— Ախպեր ջան, մե ղարիբ տղեմ էկավ, իմ զո-

[1] Բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

նաղս փլուց, էկավ նե, ըսավ. «Ախչի, ինչի՞ կուլաս», ըսի թե ախպերտիքս դյուշմընի վրա են։ Ըսավ. «Քու ախպըրտիք վե՞ր սարն են, արի ընձի խրատ տու ես կէրթամ»։ Ես ելա խրատ տվի, չիտեմ էկավ մի՞, չէկավ մի։

Ախպեր կ'ըսե թե.— Էն մանչն է քակե՞։

Կ'ըսե.— Էն մանչն է քակե։

Կ'ըսե.— Էն մանչը էկավ, մեր քովը էկավ, մեզի դյուշմանեն էն մանչը խըլլսցուց, ագար են մանչն է քակե իսա զարար չունի, էն մանչ մեր աչքի լուսն է։

Կը դառնա ու գուքա ախպըրտանց քով, կըսե.

— Ախպեր էս մեզի խլլսեցնող մանչն է քակե։

Ախպըրտիք կըսեն թե.— Մենք մեր քուրոշ էս մանչուն պիտի տանք զաթի[1]։

Գուքան տուն, կըսեն թե.— Ա՜յ տղա, մենք մեր քուրը քեզի փեշքաշ պիտի էնենք, էն օր ղու մըզի ազատիր, մենք էս ախչիկ քեզի պիտի տանք։ Ախչիկն է շատ անթիքա, ըռունդ ախչիկ է, կառնե՞ս մեր քուրը։

Մանչը կըսե.—Դուք օր տաք, ես էլ պիտի առնեմ։

Բերեն իրենց քրոշ հարսնիքը էդ մանչու հետ ախպերտիքը կէնեն։ Կուտան էդ մանչո՞ւն։

Հինգ օր, վեց օր էն մանչ էդոնց տուն կը մնա գը։ Կաշեն օր իրենց քուրը թթվուկ է։

Ախպոր մեկը քրոշը կը հարցու թե.— Քուրըս, ինչի՞ ես թըթվե դու։

Քուրը կ'ըսե թե.— Չիտեմ էս ձեր փեսեն ընձի չի հավնի։

Ախպերը կ'ըսե թե.— Ի՞նչ բան է։

Քուրը կ'ըսե թե.— Գիշերը օր կը քնենք, էս ձեր փեսեն թուրը կը դնե գը օրթալըխ։

Ախպեր գուքա մանչուն կը հարցու, կըսե.— Դու թուրդ քոռ ու քուրոշս արալաղ ինչի՞ կը դնես, վայ թե դու իմ քուրոշս չես հավներ։

Մանչը կըսե թե.— Ես աշխարքի իրես վադա ունիմ, ես նշանուկ եմ, երբոր ես իմ նշանուկը գտնեմ, նոր պիտի աշխարք մտնիմ։ Քանի օր նշանլուս չեմ գտե աշխարք չեմ մտնե։

Ախպրտիքը կըսեն թե.— Զարար չունի, գնա՛, ժուռ էկի պտրտվի, քու նշանլուդ գտի, ետև արի իմ քուր տար։

---

[1] Արդեն (Մ. Բ.)։

Սարախտան գելնի էդ դեվու հետ կէրթա, էդ ախչիկ կը մնա գը ախպրտանց քով։

Դեու հետ կերթան մե քաղաքըմ միսաֆիր կէղնին մի նաչար, խեղճ կնկամ, կաշեն որ գեղը ղալարալաղ է։

Կընկան կըսեն թե.— Մայրիկ, էս ի՞նչ ղալարալաղ է։

Կընիկ կըսե.— Եսի՞մ օղուլ։

Կըսեն.— Հալբաթ ախըր բանըմ կա։ Դու քու գեղիդ ղալաբալաղը չիտես ի՞նչ է։

Կըսե.— Մե ղարիր մարթըմ էր քոչե էկեր մեր գեղը,— կըսե,— հետը մե նշանուկ ախչիկըմ կար, էն ախչիկը ուրիշ տեղ, ուրիշ մանչու հերը տվեր է, հիմի էկեր են էդ ախչիկը հարս պիտի տանեն, էսօր օխտն օր է հինեն գուքա, ախչիկ նե չի առնի։ Ախչիկը դուռ փակեր է, մարթ չի թողնի։ Օր դուռը կոտրեն, զոռով տանեն, մե ֆինչան աղու լցեր է օր պիտի խմե, խմե ու մեռնի, պիտի հարս չէլնի։

Կ'ըսե թե.— Մայրիկ, քեզի կաղաչեմ օր ելի', էսօր հինեն դո'ռ տար էդա ախչկան։ Քեզի էլ մե քանի մը օսկի կուտամ։ Գնա մե լավ ղաղըմ[1] քեզի հալավ առ բեր, հագի, թեմիզ իստակ։ Գնա ոբ էդ ախչկա կերսարոչը ըսա. «Տուր էսօր հինեն ես տանեմ»։

Կընիկը կ'ըսե թե.— Անկարելի բան է չի նե առնե, օղուլ, տանիմ իմ ճիտս կը զարկե գը։ Մե քաղաքըմ շենլիքը թափան էնիկ հինեն չառավ, ի՞նչ պիտի էղնի օր ես տանիմ առնի։

Կ'ըսե.— Մայրի'կ, ելի', իմ մատրս մե մատնիքըմ կա, կուտամ քեզի, անցու մատրդ, հինեն էլ առ ու գնա'։ Գնա' դուռը զարկ, ախչիկն օր դուռը չի բանա, ըսե. «Դուռը նայիսա ճըրուտ արա իմ մատրս քեզի ցցում, էլի հինեն նե մի առնի»։ Էն ախչիկը մատնիքդ օր տեսավ, դուռը կը բանա, հինեն նե կառնի, քեզի մե լավըմ փեշքաշ կուտա գու ելի էկի։

Կնիկը կառնի մատնիքը էդ տղի մատեն, կանցու իրեն մատը, կ'էրթա էդ ախչկա կերսարոչ քովը կ'ըսե.— Տուր հարսիդ հինեն հ'էսօր է ես տանեմ։

Կուտա հինեն էդ կնկան։ Կնիկը կառնի ու գուքա։

Գուքա դուռը կը զարկե, կըսե.— Ախչի, արի, դուռը բաց հինեդ էսօր ես եմ բերե։

Կ'ըսե.— Եռ, ես դուռ չեմ բանա։

Կ'ըսե.— Նայիսա դուռը ճրուտ էրա, էլի մի բանա։

Նայիսա դուռը կը բանա ախչիկը, կնիկը մատը դրա արալաղեն էդա ախչկան կը ցցու։ Ախչիկը մատնիքը կը տեսնե։ Դուռը կը բա-

[1] Մի ձեռք (Մ. Բ.)։

նա, էդ կնկան նե կառնի։ Կնկա ձեռքը կը պաքե, մատնիքը կը պաքե, մատնիք մատնեն կը հանե, կառնե, ծոցը կը դնե։

Կ'ըսե.— Մայրիկ, ես քու ճամփուն մեռնեմ, դու էս մատնիքը ընձի ո՞ւրդից բերիր։ Էս մատնիքի տերը գտնես ընձի, աշխարքի էրեսը ինչքան օր գուզես փարա ես քեզի կուտամ, քանի սաղ ես ուտես, հագնես չպարպի։

Կընիկը կ'ըսե թե.— Էդ մատնիքի տերը իմ տունս է։

Կ'ըսե.— Ի՞նչրխ պիտի էնես օր էդա մատնիքի տերը բերես ես տեսնիմ։

Կընիկ կը'սե.—Էդորեն էլ ղոլայը կա՞։ Հիմի ես կէրթամ քու կերսարոչ քովը, կ'սեմ թե՝ երեխեն ու մենծը դուրս պիտի չելնին, օր քու հարսդ հինեն նե առավ, հինեն պիտի դնե ձեռները, պիտի ելնի խաս բախչեն, բադերու մեջը պիտի պտրտվի օր, էգվան սարախտան հարս պիտի էլնի։

Ախչիկը կըսե.—Արթըխ դու գիտես։

Կընիկը գելնի գուքա ախչկա կերսարոչ քովը։

Կ'ըսե.— Աչքդ լուս էլնի, քու հարսդ հինեն նե առավ, ըսավ թե. «Գնա, կերսարոչս էսա, հեչ մարթ չթողնի դուս ելնի, երեխեն ու մենծը։ Ես պիտի ելնեմ խաս բախչեն, օր հեչ մարթ ընձի չը տեսնի, պտտվիմ օր սարախտան հարս պիտի էլնեմ»։

Կերսարը գելնի կը ճվա քաղքի մեջը, կըսե.— Ղամշի բյոյլի դուրս պիտի չելնի, օր իմ հարսիս չտեսնին, հարսս պիտի ելնի բախչեն։

Շենլիքը քուլլի կը քաշվին գը նե։ Ախչիկը գելնի բախչեն, դեվն ու մանչը կը հեծնեն ձիանը, գուքան էդ բախչի քովը, դեվը ախչկա թևեն կը քաշե գը, կառնե ձիու վրեն ու կը փախնին էդտից։

Կը փախնին, դուքան մե սարըմ չադրը կը զարկեն, կը մտնին գը չադրրի մեջը։

Քաղաքը թալալ գըյնի, կը ճվա գը՝ հարսը բախչեցեն փախեր է։

Կերսար գելնի, շենլիք թոփ կ'էնե, օր էրթան հարսին ետ դառուն։

Գըյնին հարսի ետևը։ Գուքան էդ չադրրի քովը։ Դևը դելնի դուրս, գելնի էդ օրգին[1] բիրադի կը շարդե գը, կը թողնե իրեք հատ, էդ իրեքի պըռկըներ կը կտրե, ետ կը դառու։

Կ'ըսե.— Գնացեք, հարսի կերսարոչը ըսեք. «Դևն է տարե քու հարսդ, էլ մարթ թող չդրկե, մարթ չեմ թողնե, շուլլի կը զարկեմ»։

Գուքան կերսարոչ կըսեն.— Դևն է տարե քու հարսդ, մենք էս-

[1] Բանակ (Ս. Բ.)։

Քան շենլիք քուլլի ջարթան, էլ չենք էրթա, դևը մեզի քուլլի կը սը-պանե դը։

Գևլնին էդ դևվն ախչիկն ու մանչը դուքան։ Գուքան էդ հինդ ախպոր քով։ Հինդ ախպոր քուրն էլ կառնեն՝ դուքան էդ դևու չա-դրը։ Դևու շեհերեն էլ կառնեն, Գյուլիզարին էլ բերեր են։

Իրեք լե առեր է դուքա։

Գուքա հորը սընոորին կը մոտենա։ Խաբար կը խրկե դը հորը, կրսե թե.— Թող հերս ընձի դեմ դա, ես էկեր եմ, նշանլուա գտեր եմ, երկու հատ է ուրիշ բերեր եմ։

Հերը գելնի գեմը գուքա։ Գուքա մանչուն կը տեսնի, հարսնե-րուն կը տեսնի։ Կառնե հարսներն ու մանչը, գելնի կէրթա իրեն տուն։

Օխտը օր, օխտը գիշեր հարսնիք կ'էնեն։

Ինոնք թող ուտեն, խմեն, իրենց մուրազին հասնին, ջամաթն է թող ուտե խմե իրեն մուրազին հասնի։

Երկինքեն իրեք խնձոր իշավ, մեկը գիր գրողին, մեկը հեքաթ ըսողին, մեկ է ջամաթին։